# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ
# ՂԵԿԱՎԱՐ

«02» 07 2020 թ.

№ 23/07-64544

ք. Երևան, Տերյան փող., 44, հեռ.՝ (+374 11) 518 401,
էլ. փոստ՝ kentron@yerevan.am

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 2020 թվականի հունիսի 30-ի հ.345-62 գրության՝ տեղեկացնում եմ, որ նոր կորոնավիրուսային /COVID-19/ հիվանդությամբ պատճառով չեղարկվել են Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից կազմակերպվելիք պոեզիայի միջազգային օրվան, թատրոն միջազգային օրվան, մանկական գրքի միջազգային օրվան, մայրության և գեղեցկության միջազգային օրվան, Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օրվան, քաղաքացու օրվան, պարի միջազգային օրվան, ջազի միջազգային օրվան, Մայիսի 9-ի հաղթանակի օրվան, թանգարանների օրվան նվիրված միջոցառումները, ինչպես նաև «Զինապարտների հաշվառման, զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպման աջակցություն» ծրագրով նախատեսված տրանսպորտային ծառայության ձեռքբերումը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ 2020 թվականի հուլիսի 1-ի դրությամբ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից հակահամաճարակային միջոցառումների իրականացման շրջանակներում ձեռնոցներ, դիմակներ, ալկոգելեր և այլ համապատասխան նյութեր ձեռք բերելու նպատակով ընդհանուր առմամբ ծախսվել է 1.338.360 ՀՀ դրամ գումար:

ԱՎԵՏ ՊՈՂՈՍՅԱՆ

Իրավաբանական բաժին.
Կատարող՝ Ա. Մարտիրոսյան
☎ 011-518-419 E-Mail: kentronirav@mail.ru